Արձանագրություն N 2

«ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Կոմիտաս 49/4 **«31» «01» 2022 թ**
ժ.15:00

Նիստին ներկա էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ռուզաննա Սարյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Տիգրան Քալաշյան (ԳՊ/ԳԱ),
Գայանե Մանուկյան (ԳՊ/ԳԱ), Սվետլաննա Ղազարյան (ԳՊ/ԲԱ), Արսեն Ենգիբարյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Նաիրա Մկրտչյան

1. Տեղեկություններ «ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին
(Ռ.Սարյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 10-րդ օրը, ժամը 15:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:
2022թ-ի հունվարի 31-ից 2022թ. փետրվարի 7-ը «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում, տեղի ունեցավ «**ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/2**» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար «ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

1	«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ		ՀՎՀՀ 01220372 hardendsoft@mail.ru
2	«Պարմա-Պրինտ» ՍՊԸ		ՀՎՀՀ 01229643, parmaprint@gmail.com
3	«Քոփի Փրինթ» ՍՊԸ		ՀՎՀՀ 00152476, armana6@mail.ru
4	«Թասկ»ՍՊԸ		ՀՎՀՀ 01310193, gnumner@task.am
5	«Դեյուքս Պրինտ» ՍՊԸ		ՀՎՀՀ 01237925, deluxeprinting@mail.ru

2.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին
(Ռ.Սարյան)

2.1 Հրավերով սահմանված՝ Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 1.2 Մասնակիցներիի կողմից ներկայացված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ «Պարմա-Պրինտ» ՍՊԸ-ի և «Դեյուքս Պրինտ» ՍՊԸ-ի, մասնավորապես.

2.1.1 «Դեյուքս Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.2) 1.2 կետում հայտարարագիր լրացնող անձի տվյալները պետք է լինի ստորագրող անձի տվյալները, պաշտոնը և բացակայում է տնօրենի կողմից հաստատված լիազորագիրը:

2.1.2 «Պարմա-Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.2) 4.7 և 4.8 կետերը լրացված չեն:

2.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը, հանձնարարել ընթացակարգի քարտուղարին 01.02.2022թ. անհամապատասխանությունների շտկման ծանուցում ուղարկել կազմակերոպություններին՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

2.3 «Պարմա-Պրինտ» ՍՊԸ-ի և «Դեյուքս Պրինտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում 02.02.2022թ. շտկվել են անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակից կազմակերպությունների հայտերը գնահատվել են բավարար և հրավերի պահանջներին համապատասխանող:

ունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. **Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

3.1 Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

		1.Տպագրական աշխատանքներ Վկայական			2. Տպագրական աշխատանքներ Ծանուցագիր		
	Գնման հայտով նախատեսված ֆինանսական միջոցներ	680000			38600		
		ԱԱՀ	Ընդհանուր	Գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Գինը առանց ԱԱՀ
1	«Պարմա-Պրինտ» ՍՊԸ	96667	580000	483333	10000	60000	50000
2	«Քոփի Փրինթ» ՍՊԸ	250000	1500000	1250000	8000	48000	40000
3	«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ	-	680000	680000	-	36000	36000
4	«Թասկ»ՍՊԸ	126000	756000	630000	3300	19800	16500
5	«Դելյուքս Պրինտ» ՍՊԸ	-	300000	300000	-	10000	10000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4 **Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

(Ռ.Սարյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և ներկայացված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

5. **Տեղեկություն ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցներին բանակցություններին մասնակցելու հրավերի մասին**

(Ռ.սարյան)

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526 որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետերով՝ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա հիմքով հանձնաժողովը որոշեց կասեցնել հարձնաժողովի նիստը և հրավերի պահանջներին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին գնային առաջարկի նվազեցման նպատակով **հրավիրել միաժամանակյա բանակցությունների 2022 թվականի փետրվարի 4-ին ժամը 16:00-ին ք.Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում 310 սենյակ**:

5.2 «ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բանակցություններին ոչ մի հայտ ներկայացրած մասնակիցի ներկայացուցիչը չի ներկայացել:

5.3 Հանձնաժողովը որոշեց «ՍՉԱՄ- ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Դելյուքս Պրինտ» ՍՊԸ -ին:

5.4 Հանձնաժողովը որոշեց «ՍՉԱՄ- ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Դելյուքս Պրինտ» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

5. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ.Անտոնյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 5.4-րդ կետով ընդունված որոշումը ինչպես նաև "Գնումների մասին" ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը **«ՍՉԱՄ- ԳՀԱՇՁԲ-22/2»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Դելյուքս Պրինտ» ՍՊԸ-ին:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

1. "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ կկնքվի պայմանագիր որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

Հանձնաժողովի		Ռ.Սարյան
Նախագահ՝		Տ.Քալաշյան
Անդամներ՝		Գ.Մանուկյան
		Ա.Ենգիբարյան
		Ս.Ղազարյան
		Ն.Մկրտչյան